

26.05.2016թ.

Սևան համայնքի ղեկավար Սարգիս Մուրադյանի շնորհավորական ուղերձը
«Վերջին զանգ»-ի առթիվ

Հարգելի համաքաղաքացիներ

Այսօր մեր հանրապետությունում տոն է, «Վերջին զանգի» ավանդական հանդիսություն, որ կրկնվում է յուրաքանչյուր տարի, սակայն միշտ ինքնատիպ է, որովհետև այս երթին են միանում 17-18 տարեկան պատանիների ու աղջիկների նորանոր խմբեր:

Հրաշալի խորհուրդ ունի իր մեջ պահված այս հանդիսությունը, որը մեկտեղել է հուզմունքի, ուրախության, սպասումի և հիշողությունների զգացողություններն ու ապրումները:

Միրելի շրջանավարտներ.

Ձեզ համար սպասված այսօրը թող դառնա նոր կյանքի նախաշեմ:

Դուք եք այս երկրի վաղվա տերն ու շինարարը, կառուցողն ու ղեկավարը և ձեր հիմնարար գիտելիքներով, մարդկային լավագույն որակներով պետք է պատրաստ լինեք դիմակայելու ցանկացած փորձության և դժվարության: Առջևում ձեզ սպասվում է ինքնուրույն քայլելու հաստատականությունը, բաղձալիին հասնելու ձգտումը, պիտանի մարդ և հպարտ քաղաքացի դառնալու վճռականությունը: Վստահ քայլերով առաջ գնացեք ձեր երազանքներին:

Համոզված ենք, որ ունենք գիտելիք, կամք՝ հաղթահարելու յուրաքանչյուր դժվարություն և ձեր ներդրումն ունենալու մեր երկրի ու քաղաքի շենացման գործում: Մեր երկիրը առողջ, ուժեղ, խելացի, պատրաստված, հայրենասեր մարդկանց կարիքը միշտ էլ զգում է, և ես, հավատացած եմ, որ դուք հենց այդպիսին եք:

Այս տոնական պահին իմ շնորհավորանքներն են հղում նաև կրտսեր և հիմնական դպրոցի շրջանավարտներին. մայիսյան այս օրն առանձնանում է նաև նրանց կյանքում՝ դառնալով ուսումնառության տարվա ավարտ և մի նոր փուլի սկիզբ:

Հարգելի մանկավարժներ,

Ձեր երեխաներից ու սաներից առավել հուզված եք դուք: Ձեր շնորհիվ ու ձեր ջանքերով են նրանք ճանաչել այս իրականությունը, ձեռք բերել անհրաժեշտ գիտելիքներ:

Դուք եք, որ հպարտացել ու ոգևորվել եք ձեր աշակերտների հաջողություններով, դարձել նրանց առաջին խորհրդատուն, իսկ այսուհետ էլ նրանց հետագա կյանքի ու ապագայի ձեռքբերումներով եք թևավորվելու:

Հարգելի ծնողներ,

Օրը նաև ձերն է ու օրվա պարգևած պահերը ձեր շրջանավարտ զավակների հետ կիսում եք նաև դուք: Ցանկանում եմ, որ միշտ ապրեք հպարտության և ոգևորության պահեր:

Միրելի շրջանավարտներ.

Այսօր հրաժեշտի, հիշողությունների, խոստովանությունների օրն է, իսկ առջևում միասնական քնություններն են, ձեր հասունության և իմացության փորձաշրջանը, որին հաջորդելու է կյանքի մի նոր փուլ: Ես հավատում եմ, որ կյանք եք մտնելու՝ որպես

խելացի և կազմակերպված մարդիկ, որ լինելու եք մեր համայնքի և մեր պետության արժանի քաղաքացիները:

Մաղթում եմ ձեզ նախընտրած մասնագիտությամբ վերելքների ուղին նվաճելու անսպառ եռանդ, կամք և վճռականություն:

Պատանի բարեկամներ,

Իմ, համայնքի ղեկավարի աշխատակազմի, համայնքի ավագանու անունից շնորհավորում եմ սիրված ու սպասված օրվա՝ «Վերջին զանգ» տոնակատարության առթիվ:

Մաղթում եմ ձեզ լուսավոր ապագա, հաջողություն ուսումնառության և աշխատանքային հետագա տարիների ընթացքում, եղեք երջանիկ, ապրեք ձեր տարիքին հատուկ խանդավառություն՝ լի երազանքներով ու նպատակներով: Ընդառաջ գնացեք ձեր երազանքներին հաստատական քայլերով, ու «Վերջին զանգ»-ն էլ թող դառնա բարձունքներ նվաճելու, նոր արահետներ բացելու ճանապարհի սկիզբը՝ պարգևելով ձեզ մտքի և հոգու անսպառ լույս:

Բարի երթ ձեզ, սիրելի շրջանավարտներ: